ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ.060517670 էլ.փոստ
vertnplghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
05 ՄԱՅԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 99

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի, 219՝ հոդվածի պահանջներով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 37-րդ հոդվածի պահանջների, **որոշում եմ.**

1. Վերին Պտղնի համայնքում, Երևան-Սևան մայրուղի 1/2 հասցեում գտնվող, իրեն սեփականության իրավունքով պատկանող տնամերձ հողամասի վրա ինքնակամ կցակառույց կառուցելու համար քաղաքացի Մասիս Պետրոսյանի նկատմամբ նշանակել տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ գումարի չափով, որը պետք է վճարվի 900105231105 հաշվեհամարին:
2. Պարտավորեցնել Մասիս Պետրոսյանին օրինականացնել ինքնակամ կառուցված շինությունը:
3. Որոշումն օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում այնուհետև ձևով ուղարկել Մասիս Պետրոսյանին:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակից Մասիս Պետրոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով, կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:
6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով սահմանված դատական դատավարության դատական հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2020 թ. Մայիսի 05
գ.Վերին Պտղնի